

**ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՏՊԱՐԱՆԸ\***


Այս ընդարձակ տեղեկագրի մեջ Գեորգ Դ-ը քաջատրում և ստաջ է բերում այն բոլոր պատմական փաստերը, որոնց հիման վրա Էջմիածինը և հայոց կաթողիկոսները առանձին իրավունք են բանեցրել Եվրոպայի զանազան քաղաքներում, հատկապես Ամստերդամում հիմնած եկեղեցու և տպարանի վերա: Այստեղ Եվրոպայի զանազան քաղաքներում Էջմիածնի պահած տպարանների համար հետևյալն է ասված տեղեկագրի մեջ.

«...Տպագրութիւնն ծաղկէր ի Հոլանդա, ի քաղաքս Նարշիմ և Ամստերդամ: Նոր ջողայեցի արժանաշիշատակ Յակոբ Դ կաթողիկոս զահալկալն Մայր Աթոռոյս վառեցաւ ի սէր և յեռանդ ըղձանաց հնարս ինչ գործեալ մուծանել զարհեստ տպագրութեան և ի Հայս, ուստի առաքեաց զՍևկան եպիսկոպոսն Երևանցի, զմիաբանն Մայր Աթոռոյս, հանդերձ վարդապետօք և աշակերտօք ոմամքք յայտոսիկ կողմանս, որպիսի և իցէ կերպի տալ ուսանիլ արանց հատկացելոց ընդ ինքեան և ի ձեռս բերել զտպագրականն զարհեստս ըստ կարելոյն, իսկ ըստ ծախս թէ ի ճանապարհորդութեանց և թէ կեցութեանց և թէ տպագրական կարևոր պիտոյիցն, ըստ մեծի մասին ինքն Յակոբ կաթողիկոսն հոգեցեալ զառաւելն որքան և պիտոյանար հրամայեաց հրահանգ և կոնդակ տալով ի հայթայթել և ի լրացուցանել յօգութեանց և ի կամատր նպաստից ազգայնոց մերոց յայնոսիկ կողմանս շրջագայեալ ի միջի նոցա, ի Լեհաստան, յԻտալիա և երկիրս գերմանական իշխանութեանց: Եւ այսպէս մեկնեալ Սևկանայ ի սուրբ Էջմիածնէ յամի Տեառն 1662 յամսեանն սեպտ. 20 և անցեալ ընդ Իտալիա և ընդ Չիւրնիա, հոսկ սպա գկայ սոնու յԱմստերդամ, զտեալ անդ զոմանս ի Հայոց, վառեալս սիրով պայծառութեան և լուսաորութեան հայրենեաց, որք վաճառականութեամբ յաճախէին անդր, և սակաւաթիւ անձինք բնակութիւն ևս էին կալեալ, յորոց ոմանց զտեալ Սևկանայ նպաստ օգնութեան ըստ միութեանին և ըստ բարոյականին, մանաւանդ ևս ունելով ընդ իր զարս ունեալս զարհեստն տպագրութեան և այլ պարագայից, հաստատէ ինչ զտպարանն Էջմիածնի անուամբ, ըստ հաւանութեան և կամաց Յակոբ կաթողիկոսի յամի Տեառն 1663 և ձեռնարկէ տպագրել գրեանս հայկական տառիք և լեզուա\*\* յորոց առաջինն է Աստուածաշունչն, յորոյ ի վերջն ունի Սևկանայ յիշատակարան, յորում պարզապէս երկի նպատակ նորին, յորմէ թոյլատրեալ առ ինչ հարկադրեալ գնացեալ է անդ ևն, և զայնու միջոցս յաճախէին եկք ի հայազնէից և յանլանան ի բնակութիւն անդ յԱմստերդամ. իսկ Սևկանն երթայ անտի ի Մարսիլիա, թողեալ անդ զաշակերտն իր գկարապետ վարդապետն զարդիանապոյսեցին յամի Տեառն 1698 հրամանաւ Նահապետ կաթողիկոսի Եղեասացոյ, եհաս անդր և

\* Օտրոմակված «Էջմիածին» ամսագրի 1972 թվականի №№ Դ—Թ-ից:

\*\* Ջկարևորսն և զպիտանիս այսոցիկ տպագրական գործեաց և այլն փոխադրեաց ի ս. Աթոռ մեր Սիմեոն կաթողիկոս Երևանցի, յամի Տեառն 1764 և 1765, իսկ զկէսն մնալիցն ևս վաճառել ցանկացողաց:

Թողման եպս. Վանանդեցի, միարևմ սրբոյ Էջմիածնի և ստաջնորդ վանուց սրբոյ Խաչի Գողթնեաց, յետ այցելոյ հայաբնակ կողմանց Լեհաստանի, Իտալիոյ և այլն...»<sup>23</sup>:



Նրգեցողութիւնը սրբոյ պատարագի. Վաղարշապատ, 1874 թ.

Գեորգ Դ կաթողիկոսի ժամանակ և նորա առանձին ջանքերի շնորհիվ զարգանում ու ծաղկում է Էջմիածնում նաև հայկական ձայնագրությունը: Նորա եռանդուն ջանքերով ու պատվերով պատրաստում են հայկական բոլոր խանգերի մայրերը և ապա՝ խազերը, որով տպարանը հարստանում, նո-

խանութ է նաև երաժշտական խազերով: Ապա Գեորգ Դ կաթողիկոսի անմիջական հսկողությամբ և մասնակցությամբ և Պոլսից հրավիրված ձայնագրագետ Նիկողայոս Թաշճյանի ղեկավարությամբ այդ խազերով շուտով հրատարակվում են **Ձայնագրեալ Ծարականն** ու մյուս հոգևոր երգոց ձայնագրյալ գրքերը, որոնք մինչև այսօր էլ գործադրվում են Էջմիածնում և շատ քաղաքներին եկեղեցիներում և երկրորդ տպագրություն չեն ունեցել: Այս հրատարակությունները ս. Էջմիածնի տպարանի փառքն են կազմում և քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունն իրենց վերա հրավիրում:

Բացի այդ Գեորգ Դ կաթողիկոսը 1877 թվին Փարիզում պատրաստել է տալիս «ֆերտիպ» պատտիկաներ պատկերներ տպելու համար: Նա տպարանում հաստատել է տալիս նաև ոչ միայն «լիտոգրաֆիա» այլև Մայր Աթոռի տպարանն սկսում է զավակնականությամբ ևս մայրեր պատրաստել, որով ավելի է ընդարձակվում տպարանի գործառնությունը:

Մինչև Գեորգ Դ կաթողիկոսը Մայր Աթոռի տպարանի կառավարչական մասը եղել է Ամենայն Հայոց կաթողիկոսների ձեռքին: Կաթողիկոսներն են անմիջապես հսկել տպարանի ամբողջ գործունեության վերա և եղել են պատասխանատու այնտեղ կատարված տպագրությանց համար:

Առաջին անգամ Գեորգ Դ կաթողիկոսի օրով Կովկասի քաղաքական իշխանությունը փորձ է անում տպարանի ներքին գործունեության մեջ մտնել և այն գրաքննական ատենին ենթարկել: Այստեղ զրպարտություն էլ է տեղի ունենում նպատակին հասնելու համար: Երևանի նահանգապետը հաղորդագրում է Կովկասի կենտրոնական իշխանությանը իբր Մայր Աթոռի տպարանը տպարանական օրենքին հակառակ գործողություններ է կատարում:

Այս առթիվ Գեորգ Դ կաթողիկոսը Կովկասի գլխավոր կառավարչապետից մի գրություն է ստանում, որին 1875 թվի ապրիլի 19-ին № 120 հետևյալ պատասխանն է ուղարկում.

«Վսեմափայլ Տեր, իշխան Գեորգ Կոստանտինովիչ. յարգելի գրությամբ Ձերով, որ ի 20 մարտին տարույս, ընդ համարս 1589 վսեմափայլութեան Ձեր հաղորդելով ինձ ի մասին կառավարութեան տպարանի Մայր Աթոռոյս զի նահանգապետն Երևանայ կասուցեալ է ի տեղեկութիւն գլխաւոր կառավարութեան փոխարքային Կովկասու՝ իբր զի տպարանս մեր խոտորեալ իցէ ի կատարմանէ օրինաց որ յաղագս կառավարութեան համայն տպարանաց, հաճիք խնդրել զիմն տնօրէնութիւն ըստ այսմ առարկայի:

Առ այս փութամ հաղորդել վսեմափայլութեան Ձերում զի տպարանն . . . Էջմիածնի, որոյ ահա լրանան հաստատութեան ամբ հարիւր, որպէս ի հնումն, նոյնպէս և յօրէ անտի ենթարկելոյ Էջմիածնի ընդ տիրապետութեամբ Թուսաց բարեխնամ կայսերութեան և մինչև ցաւորս իմ կառավարէր ընդ անմիջական վերահսկողութեամբ կաթողիկոսաց ս. Էջմիածնի, տպագրելով զքազում կրօնական, դասական, պատմական և այլ տեսակ շարադրութիւնս, ըստ քննադատութեան կաթողիկոսի, ընդ նսին ունելով զժապաւինեալ մատեանս վաւերացուցեալս ի վերջին ժամանակս արքունի կնքով Սինոդիս, ենթարկելով զայնոսիկ ի տարին բազմիցս ստուգութեան Սինոդի, ըստ սահմանեալ կարգի և առաքելով զօրինօք որոշեալ թիւս օրինակաց «Արարատ» ամսագրոյ և այլ նորատիպ մատենից ի գրաքննական ժողովն Կովկասեան:

Վերստին պատուիրելով կառավարչաց տպարանի անթերի կատարել զվերոյիշեալ կարգս և մանաւանդ առաքել անխափան ի Կովկասեան գրաքննական ժողովն գորոշեալ օրինակս ամենայն նոր տպագրութեանց, ընդ նմին ոչ կարեմ ծածկել ի Ձերդ վսեմափայլութենէ զտեսանութիւն իմ ընդ այն

զի նահանգապետն Երևանայ գրութեամբ իրով որ ի 23-էն հոկտ. անցեալ 1874 ամի ընդ համարաւ 2203 հաղորդեալ զայսմ առարկայէ ի Սինոդն ու Էջմիածնի և խնդրեալ առնել զպատշաճաւոր տնօրէնութիւն, և առ այս ընկալեալ ի Սինոդէ, զպատասխանի թէ տպարանն Մայր Աթոռոյ գտանի ընդ անմիջական վերահսկողութեամբ կաթողիկոսի, վասն որոյ հարկ է դիմել առ նա, նահանգապետն կրկնեալ էր գրութիւն իր ի 19-ն յունուարի տարոյս ընդ համարաւ 148 առ կառավարիչս տպարանի, որք չեն պաշտօնական անձինք և ի նոցանէ ընկալեալ նոյնպիսի պատասխանի, որպիսի ի Սինոդէ, նահանգապետն չէ կամեցեալ հաղորդել ինձ ըստ այսմ առարկայի:

Ձայսեմանէ հաղորդելով Ձերումդ վսեմափայլութեան և լիաշոյս գուրով, զի տպարանն Մայր Աթոռոյս հաճութեամբ բարձրագոյն իշխանութեան ունի և այսուհետև մնալ յիրումն նախկին դրութեան ընդ անմիջական կառավարութեան կաթողիկոսի ու Էջմիածնի, պատիւ ունիմ մնալ Ձերդ վսեմափայլութեան...»<sup>24</sup>:

Կաթողիկոսի այս գրութեամբ խնդիրը չի փակվում: Ուստի և նույն թվի հուլիսի 22-ին № 227 հետևյալ գրությամբ է ուղղում նա Կովկասի փոխ-արքային կցելով նաև առանձին Մայր Աթոռի տպարանի կառավարությանն նախագիծը.


«Ձերդ կայսերական բարձրութիւն,

Ի վերջին ժամանակս պ. նահանգապետն Երևանայ գրութեամբ իրով առ պարոն կառավարիչն գլխաւոր կառավարութեան կայսերական բարձրութեան Ձերոյ շարժեալ է զխնդիր ի մասին կառավարութեան տպարանի ու Էջմիածնի և առաւելապէս ի մասին վաւերացուցանելոյ և զննելոյ զժապատիւնեալ մատենանս նորին ի ձեռն քաղաքական իշխանութեան, որոյ վասն պ. կառավարիչն գլխաւոր կառավարութեան յարուցեալ է ընդ իս զգրութիւն զայսմ առարկայէ:

Տպարանն ու Էջմիածնի, որոյ հաստատութեան լրացեալ են արդէն ամբ հարիր, յօրէ սկզբնատրութեան իրոյ վայելէր գլխակաւոր ազատութիւն թէ՛ ի մասին ներքին տնտեսական կառավարութեան և թէ՛ ի մասին ամենատեսակ տպագրութեանց, գտանելով ընդ անմիջական իշխանութեամբ և պատասխանատուութեամբ պատրիարք կաթողիկոսի: Յօրէ մտանելոյ Մայր Աթոռոյս ընդ բարեխնամ հովանատրութեամբ հզօր կայսերութեան Ռուսիոյ, տպարանս այս մնայր իրում նախկին դրութեան, առ որ երևէր նաև հաճութեան տէրութեան՝ չառնելով զորպիսի և իցէ տնօրէնութիւն ի մասին նորա: Սակայն կաթողիկոսունք Մայր Աթոռոյս առ ի պահպանել զայն ի կանոնաւոր կառավարութեան համաձայն օրինաց տէրութեան սահմանեալ են՝ կարգել զմի կամ զքանի մի անձինս յատկապէս կառավարիչս տպարանի, յանձնելով նոցա ի տնտեսական մասնէ Սինոդի ու Էջմիածնի, զժապատիւնեալ մատենանս յաղագս արձանագրելոյ ի նոսին որպէս զամենայն դրամական և նիւթական մուտս և ելս, նոյնպէս և զվերնագիրս և զքանակութիւնս իրաքանչիւր տպագրութեան, առաքելով զսահմանեալ թիւ օրինակաց ի Կովկասեան գրաքննական ժողովն:

Բայց որովհետև սոյնպիսի եղանակն կառավարութեան տպարանի ու Էջմիածնի տակաւին չէ ստացեալ օրինական վաւերացումն ի բարեխնամ տէրութեանէ մերոյ, իսկ գործունէութիւն նորին այսուհետև առաւել ևս ընդարձակելոց է լցուցանելով նաև զպէտու ճեմարանի ու Էջմիածնի և ի պատճառս գրագրութեանց վերագոյն յիշելոց ի մասին կառավարութեան նորա առ ի բառնալոյ յապագայս զնորանոր տարածայնութիւնս և դժուարութիւնս, նաև ստեալ ի նկատի զի նախ՝ տպարանս այս չէ ցուցեալ երբեք զորպիսի և

իցէ վնասակար թերութիւնս ի գործունեութեան իրում, նստանստանդ զի գտա-  
նելով ընդ անմիջական վերահսկողութեամբ և պատասխանատուութեամբ  
պատրիարք կաթողիկոսի, ոչ կարէ իսկ անկանիլ յարչպիսի թերութիւնս. և  
երկրորդ՝ զի տպարանք բազում հաստատութեանց Սենատի, սրբոյ Սիւննո-




Ձայնագրեալ շարական, վաղարշապատ, 1875 թ.

դոսի, համալսարանաց, հոգևոր և այլ տեսակ ճեմարանաց և այլն, վայելեն  
օրինօք զընդարձակ արտօնութիւնս, վասն որոյ վստահանամ ամենախոնար-  
հաբար ինչոյն ի Ձերոյ կայսերական բարձրութենէ բարեհաճեալ միջնորդել  
օրէնսդրական եղանակս առ նորին կայսերական օգոստոսարիստ մեծութիւն

ողորմաճարար պարգևել Մայր Աթոռոյս ընդ այլ արտօնութեանց առատօրէն բաշխելոց ամին նաև ի մասին տարւանի ս. Էջմիածնի, զարտօնութիւնս այս ըստ յետագայ նախագծի կանոնաց:

Ունիմ պատիւ մնալ սիշտ և հանապազ ջերմեռանդ աղօթարար վասն անգին կենաց օգոստոսափառ և ինքնակալ կայսեր Ռուսիոյ և Չերդ կայսերական բարձրութեան. ի 22 յուլիսի 1875 ամի, համար 227 ըստ տումարիս ԻՅԻԴ»<sup>25</sup>:




Հայրենագիտական հրատարակություններ Մայր Աթոռի տպարանի

Նախագիծ կանոնաց յաղագս կառավարութեան տպարանի սրբոյ Էջմիածնի.

- 1.—Տպարանն ս. Էջմիածնի գտանի ընդ անմիջական իշխանութեանք կաթողիկոսի Ամենայն Հայոց:
- 2.—Վասն մերձատրագոյն կառավարութեան տպարանի, հաստատի «տպարանական ժողով»:
- 3.—Տպարանական ժողովն կազմի յերկու հոգևորական կամ աշխարհական անդամոց, որք հաստատին ի պաշտաման իրեանց անորոշ ժամանակա ըստ ընտրութեան և առաջադրութեան կաթողիկոսի, օրագրութեանք Սինոդի սրբոյ Էջմիածնի:
- 4.—Անդամք տպարանական ժողովոյ արձակին ի պաշտօնէ ի կարևոր դէպս նոյն եղանակաւ, որով հաստատին ի պաշտաման և կամ առանձին առանձին, կամ երկոքեան և կամ երեքին ի միասին:
- 5.—Եղանակ գործավարութեան տպարանական ժողովոյ որոշի առանձին հրահանգօք կաթողիկոսի:
- 6.—Տպարանական ժողովն ստանայ ի տնտեսական մասնէ Սինոդի զհարկատր ծապալինեալ մատեանս, թերթահամարեալս և վաւերացուցեալս արքունի կնքով Սինոդի:
- 7.—Տպարանական ժողովն արձանագրէ ի ծապալինեալ մատեանս ուրոյն ուրոյն՝

- ա.—Ձտագրական մամուլը և զամենայն իրերէն տպարանի և ձուլարանի:
- բ.—Ձորամատր մուտս և ելս.
- գ.—Զվերնագիրս և զքանակութիւնս իրաքանչիւր տպագրութեան:
- 8.—Տպարանական ժողովն զամենայն ժապախնեալ մատեսնս իւր սուաշարկի ի տարին չորիցս, իսկ ի վերջ տարւոյն նաև զընդհանուր հաշիւն, ի զննութիւն Սինոդի, և սա ի զննութիւն վեհափառ կաթողիկոսի: Բաց յալմանէ ըստ հրամանի կաթողիկոսի, լինի զննութիւն ժապախնեալ մատենից նաև յանուկեալ դէպս:
- 9.—Տպարանական ժողովն է պատասխանատու վասն ամենատեսակ խանգարմանց կարգաց, կանոնաց և օրինաց ի մասին կառավարութեան տպարանի:
- 10.—Տպարանական ժողովն պարտաւոր է զսահմանեալ թիւ օրինակաց ամենատեսակ տպագրութեան առաքել ի Կովկասեան գրաքննական ժողովն, իսկ ի վերջ տարւոյն նաև զցուցակ վերնագրաց և քանակութեան քոյր տպագրութեանց:
- 11.—Տպարանն ս. Էջմիածնի կարէ տպել ըստ նախընթաց քննութեան և թոյլատրութեան կաթողիկոսի, առանց ենթարկելոյ քննութեան գրաքննական ժողովոյ:
- 1.—Ամսագիրն «Արարատ» որպէս էր մինչ ցարդ.
  - 2.—Ամենատեսակ կրօնական, այսինքն է՝ աստուածաբանական, եկեղեցական-պատմական, դատական, կրօնագիտական, մեկնողական և այլն, համաձայն արդի օրինաց ըստ այսմ առարկայի:
  - 3.—Ձեռագիրս նախնի մատենագրաց Հայոց և մանաւանդ ի մատենադարանէ ս. Էջմիածնի ամենատեսակ բովանդակութեամբ՝ կրօնական, փիլիսոփայական, պատմական, աշխարհագրական, թուարանական, բժշկական, հնայնագիտական և այլն:
  - 4.—Դասագրեանս ըստ ամենատեսակ գիտութեանց, նաև քառարանս և ամենատեսակ ուսումնական օժանդակութիւնս, վասն ճեմարանի սրբոյ Էջմիածնի և ամենայն հոգևոր ուսումնարանաց:
  - 5.—Ուսումնական աշխատասիրութիւնս ուսուցչաց ճեմարանի ս. Էջմիածնի:
  - 6.—Ձեռագիր աշխատութիւնս այլոց անձանց, եթէ կրօնական և եթէ արտաքին գիտութեանց բովանդակութեամբք, գնեալս. ի սեպհականութիւն ճեմարանի սրբոյ Էջմիածնի վասն շահելոյ զդիմատր օգուտս ի տպագրութեանէ և ի վաճառմանէ նոցին յօգուտ նորին ճեմարանի<sup>20</sup>:
- Տպարանի կանոնների նախագիծը Գեորգ Դ կաթողիկոսը ուղարկելով փոխարքային, միևնույն ժամանակ հուլիսի 22-ին № 228 գրությամբ հայտնում է Կովկասի գլխավոր կառավարչապետին, որ ինքը դիմել է փոխարքային տպարանի կառավարության կանոններն ուղարկելով ու խնդրելով, որ միջնորդի թագավոր կայսեր առաջ հաստատելու այն և խնդրում է կառավարչապետին ինքն ևս միջնորդի դորա համար:
- Այդ գրությունը հետևյալն է.
- «Վսեմափառ Տեր իշխան Գեորգի Կոստանտինովիչ. առեալ ի նկատի գի ի միոյ կողմանէ տպարանն Մայր Աթոռոյս, որ ցարդ վայելէր զիսկատար ազատութիւն, ըստ ամենայն մասանց կառավարութեան և գործունէութեան իւրոյ, հետզհետէ ընդարձակեցէ զգործս իւր լցուցանելով նաև զբազմատեսակ պէտս ճեմարանի ս. Էջմիածնի և համայն հոգևոր ուսումնարանաց հայոց

և միամե կողմանէ մակաբերեալ զի առ չգոյէ որոշեալ օրինաց ի մասին կառավարութեան նորին նաև այսուհետև շարժեցին ինչ ինչ խնդիրք ըստ այսմ առարկայի հանգոյն յուզելոյ խնդրոյ ի նահանգապետէ Երևանայ յաղագս ժապատինեալ մատենից, ես բարոք և կարևոր դատեցի դիմել առ նորին կայսերական Բարձրութիւն փոխարքայն Կովկասու խոնարհաբար խնդրելով միջնորդել առ ամենաողորմած թագաւոր կայսրն սեր պարգևել Մայր Աթոռոյսս և Էջմիածնի ի միասին կառավարութեան տպարանի զինչ ինչ արտօնութիւնսս ըստ առանձին ծրագրի կանոնաց, զոր պատիւ կալալ մատուցանել ընդ գրութեան իմոյ /Նորին Կայսերական Բարձրութեան:



Պատմիչների հրատարակություններ Մայր Աթոռի տպարանի

Հաղորդելով զայսմանէ Ձերոյ վսեմափայլութեան ի հետևումն գրութեան Ձերոյ առ իս, որ ի 12-էն մայիսի տարույս ընդ համարս 2318 և լիայոյս գոյով զի դուք վսեմափայլ Տէր, ըստ յարատև համակրութեան և բարեմտութեան Ձերոյ առ ազգս Հայոց և առ Մայր Աթոռս նաև յատկապես առ իս, ունիք բարեհաճութեամբ համակրել և նպաստամատոյց լինել յաջողութեան միջնորդութեանս, պատիւ ունիմ մնալ վասն Ձեր, վսեմափայլ Տէր...»<sup>27</sup>:

Գեորգ Դ կաթողիկոսի վերոգրյալ դիմումները ցանկալի նպատակին չեն հասնում: Կովկասի գլխավոր կառավարչապետը տպարանի կառավարության կանոնների նախագիծը հաստատել չի տալիս: Նա, գուցե և Երևանի նահանգապետի դրդմամբ, նոր գրություն է ուղղում կաթողիկոսին, որի սեջ պահանջում է, որ տպարանը ենթարկվի Սինոդին, իբրև նորան ենթակա հաստատություն ի շարս մյուս հաստատությունների, որպեսզի հեշտ լինի հսկել տպարանի գործունեությանց վրա: Գեորգ Դ-ն օրենքի 11-րդ հատորի որոշ հոդվածների հիման վերստաց է բերում, որ տպարանը 60 տարով առաջ է հաստատվել Սինոդից և որ տպարանը եղել է յուր նախորդ հանգուցյալ կաթողի-

կոմերի անմիջական հսկողության տակ: Բացատրում է նաև, որ ոչ մի զանգստություն չէ կատարվել տպարանում և չի կարող կատարվել, քանի որ տարվո մեջ հաշիվ է տրվում Սինոդին, որտեղ բոլոր գործառնությունները նշակում է կառավարության կողմից նշանակված պրոկուրորը:

Վերջը նորից խնդրում է կառավարչապետին տպարանի համար ուղարկած կանոնների նախագիծը սրբագրել տա և իրեն հետ համաձայնության գալուց հետո՝ հաստատել տա: Այս բոլորը միասին առաջ է քերել հետևյալ գրության մեջ.

«Առ գլխատր կառավարչապետն ի Տփլիսի.

Վսեմափայլ տեր իշխան Գեորգի Կոստանտինովիչ.


Ջյարգելի գրութիւն Ձերդ վսեմափայլութեան, որ ի 22 հոկտեմբերի տարույս ընդ համարա 4798 ընկալեալ և ընթերցեալ ծանրակշիռ ուշադրութեամբ՝ կարևոր համարիմ յառաջ քերել աստ զհետևեալ բացատրութիւնս.

Նախ, ոչ կարեմ համաձայն գտանիլ ընդ ենթադրութիւն յայտնեալ ի գրութեան Ձերդ վսեմափայլութեան թէ՛ տպարանն և Էջմիածնի իբր զի պատկանի Սինոդին և Էջմիածնի քանգի՝ որպէս քաջ յայտնի է հարձրագոյն Տէրութեան, տպարանն այս հաստատեալ է վարժարան և աւելի ամօք յառաջ բան զհաստատութիւնն արդի Սինոդի: Սինոդն ոչ այլ ինչ է, և թէ ոչ ստեղծական ինչ հաստատութիւն ընդ նախագահութեամբ պատրիարք կաթողիկոսի, հանդերձ որոշեալ իմն սահմանա իրանսութեան և պարտոց ի մասին կառավարութեան այլ և այլ գործոց Հայաստանեայց եկեղեցոյ ի սահմանս լծուսիոյ, որ և չունի ոչ ըստ օրինաց և ոչ ըստ գործնական սովորութեան գեւիականութիւնս ինչ և զկալուածս, այլ ամենատեսակ կալուածք անշարժք և շարժականք՝ և հաստատութիւնք (տպարան և այլն) յտոկապէս պատկանին վանաց և Էջմիածնի և ոչ երբեք Սինոդին:

Երկրորդ. ենթադրութիւնն թէ լիակատար կառավարութիւն տպարանի և Էջմիածնի և մանաւանդ տնտեսական մասն նորին, ըստ զօրութեան 3-րդ պարբերութեան 938 յօդուած 11-հատոր 1-ին մասին, պատկանի Սինոդին, չէ համաձայն ընդ ճիշտ իմաստից 935 յօդուածի և ծանօթութեան 2-րդ պարբերութեան նոյն 938 յօդուածի նոյն հատորոյ և մասին որոյ զօրութեամբ լիակատար կառավարութիւն տնտեսական և այլոց մասանց գործոց ի շրջանի վանաց և Էջմիածնի պատկանի յտոկապէս պատրիարք-կաթողիկոսի որպէս ծայրագոյն իշխանի սոյն վանից: Վասն այսորիկ լիակատար իշխանութիւնն ի վերայ ամենատեսակ հաստատութեանց սոյն վանաց, ապա ուրեմն և ի վերայ տպարանի, սորին իբրև սեփականութեան սորին՝ պարտի պատկանիլ անմիջապէս պատրիարք-կաթողիկոսի և ոչ երբեք Սինոդին. և այսպէս իսկ եղեալ է, որպէս նախքան զհաստատութիւնն Սինոդի, նոյնպէս և յօրէ հաստատութեան նորին, մինչ ցարդ լլնթացս ամբողջ քառասուն ամաց: Յայս իսկ միտս և սովին այսու պատճառաւ եղեալ է ի ծրագրի իմում յաղագս կառավարութեան տպարանի և Էջմիածնի յօդուածն առաջին:

Սակայն, որպէսզի նաև Սինոդն մասնակից լիցի ի գործս կառավարութեան տնտեսական մասին տպարանի՝ եղեալ են ի ծրագրի յօդուածքն 3-րդ, 4-րդ, 6-րդ և 8-րդ, ըստ որոց անդամք տպարանական ժողովոյ հաստատին ի պաշտաման իրեանց և արձակին յայնմանէ օրագրութեամբ Սինոդի և ստանայ ժողովն զամենայն ժապախեալ մատեանս իր ի Սինոդէ, որում մատուցանէ նաև զմանրամասն հաշիւս ի տարին չորիցս և ի վերջ տարույն զընդհանուր հաշիւն: Ապա ուրեմն, Սինոդն չէ միանգամայն անջատեալ ի վերայ հսկողութենէ ի վերայ տպարանի: Բաց յայնմանէ յօդուածքն 1, 2, 3,

4, 5, 6 և 7 ոչ թե տեղի տան հաստատության նոր իմն օրինաց, այլ միայն շուրջանն զկարգն կառավարության տնտեսական մասին տպարանի և վասն



Ձայնագրեալ քաղուածք օրհնութեանց. Վաղարշապատ, 1882 թ.

այսորիկ ըստ ներկայ դրութեան խնդրոյ ի մասին տպարանի Էջմիածնի պետք են օրէնսդրական հաստատութեան:

Երրորդ. թողուն զիսազօր իշխանութիւն տպարանի ի ձեռն պատրիարք կաթողիկոսի անյարմար դատեալն ի ձեռն ըստ երկուց պատճառաց նախ՝

ըստ արմատական օրինաց տերութեան ոչ է մարդ թոյլատրել ի միում տեւոնց գերկուս ուստիկանութիւնս և երկրորդ՝ զի չէ այդ վայել բարձր կոչման և պաշտօնի պատրիարք կաթողիկոսի: Առ այս պարտ է ասել զի նախ՝ եթէ նպատակ ուստիկանական վերահսկողութեան է հսկել զի տպարանն ոչ կատարեացէ զորպիսի կիցէ ապօրինի գործս, ապա ուրեմն ուստիկանութիւնն ունի միջամոյս լինել նաև յամենայն մատուց կատարութեան վանից ս. Էջմիածնի և մանասանի Սինոդի և յայնժամ լինէին ի տեւոնց երկու ուստիկանութիւնք. քանզի պաշտօն պրոկուրորի Սինոդի ունի նոյնպիսի նպատակ և հսկէ որպէս ընդհանրապէս ի վերայ կանոնատր գործաւարութեան Սինոդի, նոյնպէս և ի վերայ կատարութեան վանից. իսկ պրոկուրորն ի վերայ հիման 3-րդ, 6-րդ և 8-րդ յօդուածոց ծրագրի դիրութեամբ կարէ հսկել նաև ի վերայ տպարանի, որով միանգամայն հեռանայ պետքն հսկողութեան նաև ի կողմանէ ուստիկանութեան: Եւ երկրորդ՝ ի վեր անոր յիշեալ արմատական օրէնք բարեխնամ տերութեան մերոյ չեն ինչ նոր՝ և յնթացս քառասուն ամաց ոչ համարէին նորա լուծեալ և խանգարեալ, որպէս և անյարմարութիւնն ի մասին պատուոյ և ստոյնանի պատրիարք կաթողիկոսի ոչ համարէր այդպէս ոչ յաչս չորից կաթողիկոսաց նախորդաց իմոց և ոչ յաչս նոյնիսկ տերութեան: Վասն որոյ, յօդուածքն ծրագրի 8, 9 և 10-րդ, որք ի միոյ կողմանէ ամփոփեն յինքեանս քառասունամեայ գոյութեամբ նոյրագործեալ և ի բարեխնամ տերութենէ մերոյ փաստօրէն ընկալեալ զորութիւն տպարանի Էջմիածնի և ի միւսմէ կողմանէ միանգամայն լցուցանեն զպահանջս տերութեան, կարծես թէ՛ չեն հակառակ համապատշաճ առ այս օրինաց և կարեն հաստատեալ լինել օրէնդրական կարգաւ:

Չորրորդ. Մեմարանն ս. Էջմիածնի հաստատեալ գոյով ըստ կանխաման թոյլատրութեան Նորին կայսերական Մեծութեան և վաներացուցեալ ի գոյութեան իրում բարձրագոյնս հաստատեալ կանոնադրութեամբ, կարէ անշուշտ վայելել ըստ օրինակի արքունի համալսարանաց, ճեմարանաց, գիտնական հաստատութեանց և ընկերութեանց յայն ամենայն իրաւունս և արտօնութիւնս ի մասին քննութեանց և տպագրութեանց, ընդ պատասխանատուութեամբ իրեանց առանց ինչ մասնակցութեան ընդհանուր գրաքննութեան այլ և այլ շարադրութեանց եթէ ըստ կրօնական և եթէ ըստ արտաքին գիտութեանցն բովանդակութեանց, որպիսի իրաւունք և արտօնութիւնք օրինօք յատկացուցեալ են վերոյիշեալ գիտնական հաստատութեանց. (ծան. 3-րդ հոդ. 5, գրաքննական օրէնք): Վասն այսորիկ և առ ի խոյս տալոյ յաւելորդ ծախուց հարկատր եղելոց վասն հաստատութեան նորոյ տպարանի ի պէտս ճեմարանի, յարմարագոյն դատեցայ ի տպարանի ս. Էջմիածնի լցուցանել նաև զամենայն պէտս նորին, և ըստ որում ծայրագոյն իշխանութիւնն և վերահսկողութիւնն ի վերայ ճեմարանի ըստ բարձրագոյնս հաստատեալ կանոնադրութեան պատկանի անմիջապէս պատրիարք կաթողիկոսին, վասն որոյ կարի նպատակաւարմար և կանոնատր լինելոց է՝ զի յետ գրաքննութեան ուսումնական ժողովոյ ճեմարանի զորպիսի կիցէ շարադրութեանց՝ զվերջնական թոյլատրութիւնն վասն ի տիպ ածելոյ, զնոսին տացէ պատրիարք կաթողիկոսն: Ահա խորհրդաձեռութիւնք որք եղեն հիմն վասն 11-րդ յօդուածոյ, որ վերաբերի յատկապէս առ տպագրութիւնս տպարանի ս. Էջմիածնի և բնաւ չհակառակի 40-րդ յօդուածոյն գրաքննական օրինաց: Չէ աւելորդ յաւելոյ աստ՝ զի և առանց գոյութեան այսպիսի ճեմարանի պատրիարք կաթողիկոսն միշտ վայելէր յայդպիսի իրաւունս և արտօնութիւնս քննելոյ և տպագրելոյ ի տպարանի ս. Էջմիածնի առանց նախընթաց կամ յետագայ մասնակցութեան կովկասեան գրաքննա-

կան ժողովոյ զհեղինակութիւնս, ոչ միայն ըստ կրօնական բովանդակութեան, այլև ըստ բովանդակութեան ամենատեսակ արտաքին գիտութեանց, որպէս ցուցանէ գործնական փորձն և 40-րդ յօդուածն գրաքննական օրինաց ոչ համարէր լուծեալ և խանգարեալ ընթացս ամաց քառասնից:

Առեալ ի նկատի՝ զի վերոբերեալ հանգամանք և բացատրութիւնք իմ, որք համառօտ իմն կերպիս ակնարկեալ են ի գրութեան իմում որ 22 յուլիսի ընդ № 228 առ թագաւոր Մեծն իշխան փոխարքայն՝ որք և զօրութեամբ իմանին ըստ իմաստից յօդուածոց ծրագրի իմոյ չեն ինչ նոր, այլ ի վաղնջուց քաջ իսկ յայտնի են բարեխնամ տէրութեան, ես ի խնդրոյ յարուցելոյ արդ ի մասին կառավարութեան տպարանի ս. Էջմիածնի և ի վերջին գրութենէ Ձերդ վեմափայլութեան մակաքերեմ, զի իրաւունք և արտօնութիւնք, յորս վայելէին ընթացս բազում ամաց նախորդք իմ, Յովհաննէս, Ներսէս և Մատթէոս կաթողիկոսունք, այժմ բառնին յինէն: Եւ ոչ կամիմ անգամ ի միտ անել՝ զի պատճառ տրին իցէ առանձին իմն անվատահոփին և կասկած զինէն ի կողմանէ բարեխնամ Տէրութեան Ռուսիոյ և մանաւանդ ի կողմանէ Նորին Կայսերական Բարձրութեան փոխարքային Կովկասու, յորոց ի բարձր շնորհս վայելեալ են յոյժ ցարդ, իսկ (մի արասցէ Տէր) եթէ իցէ այնպէս և կամք են ի կարի անպատուութիւն ինձ խել յինէն զիրաւունս յորս վայելէին նախորդք իմ, ո՛չ ապաքէն բարոք ևս լինէր բոլորովին փակել զտպարանն ս. Էջմիածնի, եթէ բարեհաճ կամք և բացարձակ թողատրութիւն ի կողմանէ Նորին Կայսերական Բարձրութեան լիցի:

Յաւարտ բանիս պատիւ ունիմ ամենախոնարհաբար խնդրել ի ձեռն, վեմափայլ Տէր, բարեհաճեալ միջնորդել առաջի թագաւոր մեծ իշխան փոխարքայի որպէսզի յետ պնտշանաւոր սրբագրութեան ի վերայ մատուցեալ յինէն ծրագրի կանոնադրութեան ի մասին կառավարութեան տպարանի ս. Էջմիածնի, եթէ միայն կարևոր համարեացի դոյնափսի սրբագրութիւնն, և յետ համաձայնութեան ընդ իս ըստ նորոգ սրբագրեալ կետից, տացին ընթացք միջնորդութեան և ծրագրի իմոյ, ըստ օրէնսդրական կարգի:

Առ լցեալ միշտ զգացմամբ խորին շնորհակալութեան առ Ձեզ, և նշմարիտ յարգանօք և մտերմութեամբ պատիւ ունիմ մնալ վասն Ձեր...

յՑ-նոյնմերի 1875 հմբ. 369»<sup>30</sup>:

Դորանից հետո անցնում է մի տարի ևս: Գեորգ Դ կաթողիկոսի հարուցած խնդիրները մնում են առկալս: Կովկասի կառավարչապետ իշխան Մուխրանսկին փոխվում է, նորա տեղ նշանակվում է նորը:

Այն ժամանակ Գեորգ Դ կաթողիկոսը 1876 թվի հոկտ. 16-ի № 295 մի երկար նոր հուշագիր է ուղարկում նոր կառավարչարեւտին, որի մեջ մի առ մի բացատրում է տպարանի կառավարության շուրջը ծագած խնդիրները, առաջ է բերում մեղադրական անհիմն կետերը, որոնցով Երևանի նահանգապետը աշխատում էր կաթողիկոսների վերա անհավատարմության սուվեր ձգել և պատրիարք կաթողիկոսների իրավունքները կրճատել: Ապա ավելացնում է, թէ ռուսաց տիրապետությունից հետո կաթողիկոսները տպարանի վերա իրավունք են բանեցրել, որ սրբագործված է կայսրների գիտությանը, և այժմ եթե այսօր կարծում են թէ այդ իրավունքը խել կարելի է, այդ կարելի է միայն թագավոր կայսեր բարձր հրամանով:

Բողոքում է նաև, որ Երևանի նահանգապետի առանձին հանձնարարությանց պաշտոնյան տպարան գալով՝ տուգանքի է ենթարկել տպարանական ժողովի անդամներին, իբր թե ծապալիկնյալ մատյանը իրենից չէ վավերացրած: Ապա խնդրում է կա՛մ տպարանը ազատել սյդ օրինակ միջամտությունի-

ներից և թողնել ներկա դրության մեջ և կա՛մ տպարանի կանոնների նախագիծը ուղարկել կայսեր ի հաստատություն:

Այս պատմական հուշագիրը հետևյալն է.

«Կենտախալ Տէր Պատէ Կիկոյանիչ.

Գլխաւոր կառավարութիւնն դեռևս յամենան մարտի անցելոյ 1875 ամի սկզբնարար ընդ իս գրութեան որ յաղագս ունելոյ ի տպարանի Մայր Աթոռոյ ա. Էջմիածնի զժապաւհնեալ մատենան և առ հաստատելոյ ի վերայ նորին ընդհանրապէս զհսկողութիւն տեղական նահանգական իշխանութեան:



Ս. Գրիգոր Լուսավորիչ. Յամասխապատում ճառք. Մայր Աթոռ  
ա. Էջմիածին, 1894 թ.

Ի պատասխան անաջնոյ՝ որ ըստ այսմ խնդրոյ գրութեան նախորդի Ձերո՛ր հարձր գերագանցութեան իշխան Մուխրանակոյ ի 20 մարտի անցելոյ ամի ընդ № 1539, ես ի գրութեան իմում ի 14 ապրիլի նոյն ամի ընդ № 120 բացատրեցի՝ թէ տպարանն Մայր Աթոռոյ ա. Էջմիածնի, որ կայ աստէն ի հարիւր վերանելի ամաց հետէ, ի հնումն և անդստին յօրէ անտի տիրապետութեան Ռուսաց մինչև ցաւորս իմ գտանէր ընդ անմիջական վերահսկողութեանը պատրիարք կաթողիկոսացն Էջմիածնի, յորում և տպագրէին բազում կրօնական, պատմական, դասական և այլ բազմատեսակ հեղինակութիւնք, ընդ գրաքննութեանը նորին ինքեան պատրիարքի, և թէ տպարանն ունի զժապաւհնեալ մատենան վանքացոցեալս ի Սիմոնէն, որ յարար տպագրութեան

դէ ի Կովկասեան գրաքննական ժողովն զսահմանեալն թին օրինակաց ամենից ստանց բացատրեան հրատարակութեանց, բաց եկեղեցական գործոց. ուստի խնդրեցի իշխան Մուխրանսկոյն միջնորդել առ նորին կայսերական բարձրութիւն թողուլ զտպարանն Էջմիածնի իրումն ներկայ պայմանի, ընդ անմիջական վերահսկողութեամբ պատրիարք կաթողիկոսին:

Առ այս իշխան Մուխրանսկին ի գրութեան իրում ի 12-ն մայիսի նոյն ամի ընդ № 2313 ի մէջ բերեալ վերստին համառօտ բանիւք զրովանդակութիւն ստաշնոյ գրութեան իրոյ՝ արար բացատրութիւն իմումս միջնորդութեան:

Յայնժամ անհրաժեշտ իմն վարկայ ես միննոյն ստաշարկութեամբ դիմել անընդմիջաբար առ Նորին Կայսերական Բարձրութիւնն և ի գրութեան իմում ի 22 յուլիսի ընդ № 227՝ մատուցեալ զհամառօտ նախագիծ կանոնաց, որ յաղագս կառավարութեան տպարանի ս. Էջմիածնի, ամենախոնարհաբար խնդրեցի ի նմանէ բարեհաճիլ մատուցանել զայն օրէնտդրական կարգաւ ի բարձրագոյն բարենկատողութիւն Նորին Կայսերական Մեծութեան, ընդ նմին առանձին գրութեամբ իմով ի նոյն թիւ ամսոյն ընդ № 228, խնդրեցի իշխան Մուխրանսկոյն ցուցանել զիրն բարեհաճ գործակցութիւն միջնորդութեանս իմում:

Բայց իշխան Մուխրանսկին ի գրութեան իրում ի 22 հոկտեմբերի ընդ № 4798 յետ մանրամասն քննելոյ զամենայն յօդուածս ծրագրին իմոյ, հարողոքեաց ինձ՝ թէ յետ առաջի առնելոյ զգործն զայն Մեծի իշխանին՝ Նորին Բարձրութիւնն բարեհաճեալ է յանհնարիցն համարիլ տալոյ ընթացս այնմ միջնորդութեան օրինասահման կարգաւ:


Եւ քանզի ի վերոյիշեալ քննութեան նշմարեալ էր իմ զի բազում յօդուածք ծրագրիս բացատրեալ են ոչ ըստ նիշտ իմաստից իրեանց, ուստի գրութեամբ իմով յ8-ն նոյնմբերի ընդ № 369 մանրամասնաբար բացատրեցի զիսկական իմաստն ամբողջ ծրագրին և վերականգնեցի զհիմունս, յորոց վերայ ըստ իմումս համոզման՝ չէ ինչ անհնար տալոյ ընթացս միջնորդութեանս օրէնտդրական կարգաւ:

Առ այս ես ընկալայ զգրութիւն իշխան Մուխրանսկոյն ի 28 փետրուարի ներկայ 1876 ամի ընդ № 1181՝ յորում վերստին միս անգամ մերժեալ է իմս միջնորդութիւն, գլխատրապէս ի վերայ այնր հիման իբրոյ թէ «**Չիցեն անծանօթ ինձ դէպք տպագրութեան ի տպարանի ս. Էջմիածնի** շարտդրութեանց, որք անհամապատասխան են ուղղութեամբ գրաքննական կանոնաց, որոյ վասն դարձուցեալ է ի վերայ իր զուշարդութիւն, Կովկասեան գլխատր իշխանութեան... և թէ՛ վասն այնր իսկ, զի կարեն միսանգամ նորոգիլ ի տպարանի ս. Էջմիածնի» **նշմարեալքն արդէն ի նմա կանոնազանցութիւնք**, ուստի չէ կարելի աչլես թողուլ զայն ստանց կարևորն հսկողութեան ի կողմանէ պատշաճաւոր իշխանութեանց, յորոց վերայ եղեալ է այն ըստ օրինի:

Ջարդարն խոստովանելով Ջերոմի բարձուգերագանցութեան ասացից՝ թէ դոյն օրինակ ապացուցութիւնք իշխան Մուխրանսկոյն կրթեն զիս ի մեծ զարմանս և ի տարակուսանս, քանզի որպէս դիտին է Ջեզ վսեմափայլ Տէր, վերահասու լինել ի գործոց գլխատր կառավարութիւնն ոչ երբեք հաղորդեալ է ինձ կամ առհասարակ չէ ինչ արարեալ նորս ընդ իմս գրութիւն զայնմանէ՝ թէ Կովկասեան գլխատր իշխանութիւնն նկատեալ իցէ ի տպարանի ս. Էջմիածնի զորպիսի և իցէ **կանոնազանցութիւնս** ի մասին տպագրութեանց, որք անհամապատասխան իցեն ուղղութեամբ իրեանց գրաքննական կանոնաց և թէ դոյնափիսի դիպումս ոչինչ **անծանօթք** իցեն նաև ինձ:

Այսպէս, յանսկնկալս ուրեմն ստուեր իմն արկանեն ի վերայ ազնի և

անկեղծ հաւատարմութեան և մտերմութեան իմոյ առ բարեխնամ տէրութիւն Ռուսաց, իբրո՛ւ այն թէ անձամբ անձին խրախուսեալ իցեմ կամ գէթ թոյլ տուեալ անցանել առանց ուշադրութեան ոչ անձանօք ինձ դիպաց ընդդէմ տէրութեան կամ օրինաց՝ նկատելոց ի գործունէութեան անդ տպարանի ս. Էջմիածնի: Գուցէ անբարեմիտ անձինք ոմանք, վասն անձնական շահոց և նպատակաց տուեալ իցեն Կովկասեան գլխաւոր իշխանութեան ստիթս ունելոյ գրոյնպիսի գաղափար՝ և այն որով և իցէ ալլափոխ կամ անհարազատ թարգմանութիւնք յԱրարատ ամսագրոյ կամ յալոց տպագրութեանց տպարանի, սակայն ես աներկեան իմն վստահութեամբ կարեմ հաւատի առնել, զի ի տպարանի ս. Էջմիածնի բնաւ երբեք չէ տպեալ և ոչ տող մի անգամ, որ ընդդէմ իցէ օրինաց կամ տէրութեան իրովն ուղղութեամբ և առհասարակ



Խրիմյան Հայրիկ. Պապիկ և Թոմիկ.  
Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1894 թ.

բնա իսկ երբեք չէ թոյլ տուեալ սորա անցանել որպիսի կիցէ ապօրինի գործողութեանց, ապա ուրեմն և գործողութիւնքո՛ւ այդոքիկ կարեկն իսկ ոչ լինել ինձ ոչ անձանօք կամ ծանօքք:

Իսկ որ ինչ վերաբերի առ ցուցեալն գրեան ի նահանգապետէն Երևանայ ի հաղորդագրութեան նորին առ Սիւնոյն ի 23-էն հոկտեմբերի 1874 ամի ընդ № 2203, տպեալ ի 1872-4 ամի ի տպարանի ս. Էջմիածնի ընդ վերնագրովք ընդհանուր պատմութիւն Իլովայսկոյ հայկական թարգմանութեամբ, խաղաղութիւն մտաց և երգք վանեցի և մշեցի Հայոց, յետ խստագոյնս քննելոյ գրովանդակութիւն նոցին՝ կարելի է համոզիլ թէ չէ ինչ ի նսսին որ ընդդէմ իցէ Տէրութեան:

Ի քննին առեալ զայն՝ զի քննացս գոզցես այս լիսնից ամաց տպարանն

ս. Էջմիածնի, ոչինչ զանկալաբար ի Տերութենէն մնայր յիրումն ներկայ դրութեան, ազատ ի գործադրութենէ գրաքննական կանոնադրութեան, և դովին այդու պատճառաւ չյարմարեցաւ ի տէրութենէն զանց արարեալ զկանոնադրութեամբն. զի երջանկայիշատակ նախորդք իմ, պատրիարք կաթողիկոսունք Յովհաննէս, Ներսէս և Մատթոս, վայելին յիրաւունս անմիջապէս վերանկելոյ ի վերայ տպարանի Մայր Աթոռոյ, առանց իրիք միջամտութեան ի կողմանէ ռատիկանական իշխանութեան, և զի ի սոյն իրաւունս ես ինքնին վայելի յնթացս ութից ամաց. ուստի ի յարուցեալ արդ խնդրոյն որ յաղագս տարածելոյ զտեղական նահանգական իշխանութիւն ի վերայ սոյն տպարանի, չկարեմ չնշմարել ի կողմանէ կովկասեան գլխաւոր իշխանութեան զցանկութիւն բառնալոյ յինէն զմասն պատրիարքական իրաւանց իմոց և զկասկած անհատատրութեան զանձնէ իմմէ յատկապէս:

Բայց քանզի յիշեալ իրաւունք իմ սրբագործեալ են այս ամբողջ յիւրնամեայ գոյութեամբ առ տիրապետութեամբ Ռուսաց, վասնորոյ ներեացի ինձ կարծել՝ թէ կարելի է զայն բառնալ յինէն ոչ այլապէս եթէ ոչ բարձրագոյն հրամանաւ միայնոյ թագաւոր կայսեր:

Բայց յայտնանէ յաւորս յայտասիկ յոյժ վշտացոյց զիս հետևեալ հանգամանք, ըստ սմին այսմ գործոյ. քանզի աստիճանաւորն առանձին յանձնարարութեանց նահանգապետին Երևանայ՝ Դուլումանակի, իբրև վերադիտող տպարանաց, եկն ի տպարան ս. Էջմիածնի և կազմեաց արձանագրութիւն զայնմանէ թէ տպարանն չունի զժապատիմեալ մատեան, որ վաւերացուցեալ իցէ յինքնէն: Հաշտարար դատաւորն Էջմիածնի ի վերայ հիման դոյն արձանագրութեան, ենթարկեաց զհաստատեալ յինէն անդամս տպարանական ժողովոյն, զկառավարիչ բաժնի դրամական ելից և մտից, և ետ տպարանին զվարդապետս զՎրթանէս և զՆերսէս և զսարկաւագունս զԵնուկը և զՄկրտիչ, զհարաբանչիւրն 20-ական ռուբլի դրամական սուգանաց, թէև չէր ինչ յանցանք անդամոց ի միջի:

Արդ, յետ վերոգրելոցն ամենից, դիմեմ առ Չերդ բարձր գերագանցութիւն՝ զի բարեհաճեալ միջնորդեսցիք առ Նորին Կայսերական Բարձրութիւն փոխարքայն Կովկասու զյետագայից, կամ թողոյ տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի ի ներկայ դրութեան իրում, առանց իրիք միջամտութեան ռատիկանական իշխանութեան, հրամանագիր արարեալ զայտնանէ որոց հարկն է, և կամ զառաջարկեալն յինէն զծրագիր կանոնաց, որ յաղագս կառավարութեան տպարանիս արկանել հաճեսցիք օրէնսդրական կարգաւ առ ռոս Նորին Կայսերական Մեծութեան ի Բարձրագոյն հաստատութիւն:

Պարարելով զյոյս ակնկալութեան թէ Չերումդ բարձու գերագանցութեան բարեհաճ կամք եղիցին արդեօք ցուցանել որպէս ինձ, նոյն և առանձին Հայրապետական Աթոռոյ համօրէն ազգիս Հայոց, զբարեմիտ գործակցութիւն Զեր առ բարեյաջող աւարտումն իմոյ այսր միջնորդութեան, պատիւ ունիմ խորին յարգանքօք և նոյն օրինակ մտերմութեամբ լինել յաւետ վսեմափայլ տէրութեան Չերոյ շերմեռանդ աղօթարար...»:

Ի 16 հոկտ. 1876 ամի ըստ տոմարին ՌՅԻՉ հմբ. 295<sup>թ</sup>:

Գեորգ Դ կաթողիկոսի այս երկար փաստացի, հուշագիրը ևս կովկասյան կառավարչապետի կողմից հարկավոր ուշադրության չի արժանանում, ուստի և նա ստիպված է լինում, սլաշտպանելով չոր պատրիարքական-կաթողիկոսական իրավունքները 1876 թվի դեկտեմբերի 18-ին № 367 նոր գրությամբ դիմել Կովկասի գլխավոր կառավարչապետին և թախանձանք խնդրել չոր առաջարկություններն ուղարկել ուր հարկն է ի հաստատություն:

(Շարունակով)